ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018 թ հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի ծնողական խորհրդի նիստը: Նիստին ներկա էին ծնողական խորհրդի նախագահ Հրանուշ Ավագյանը, քարտուղար Տաթևիկ Ազատյանը, ուսուցիչները և ծնողները:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Անապահով ընտանիքների և ծնողազուրկ երեխաներին դասագրքերի վարձավճարներից ազատելու հարցը:
2. 2018 թ ատեստավորվող ուսուցիչների մասին դպրոցի ծնողական խորհրդի կողմից կարծիքներ տալու հարցը:

1.Լսեցին. - Անապահով ընտանիքների և ծնողազուրկ երեխաներին դասագրքերի վարձավճարներից ազատելու հարցը:

Ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանը՝ նշելով, որ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարները փոխհատուցելու համար , համաձայն Կոտայքի մարզպետարանի հետ կնքված պայմանագրի, դպրոցի ֆինանսական եկամուտների մեջ ներառվել է 190.300/ հարյուր իննսուն հազար երեք հարյուր/ դրամ գումար:

Նաիրա Բաբայանը նշեց, որ դասղեկներին նախապես հանձնարարվել էր ծնողական խորհրդի հետ քննարկել և տնօրենությանը ներկայացնել ծնողակազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ցուցակները: Դասղեկները ներկայացրին իրենց դասարանների սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաների անվանական կազմերը , որոնց հիման վրա կատարվեց քննարկում և կազմվեց հետևյալ ցուցակը/ ցուցակը կցվում է ստորև/:

Որոշեցին.- Ծնողական խորհուրդների և դասղեկների կողմից ներկայացված ներքոնշյալ աշակերտներին ազատել դասագրքերի վարձավճարներից:

1. 5 «Ա »Թումանյան Վիտյա Բագրատի 3640
2. 5 «Ա »Հակոբյան Կարեն Բաբկենի 3640
3. 5 «Բ» Պետրոսյան Պետրոս Անդրանիկի 3640
4. 5 «Բ »Սարգսյան Գոհար Էդգարի 3640
5. 5 «Բ »Սարգսյան Դավիթ Աշոտի 3640
6. 6 «Ա »Գևորգյան Լուսինե Կամոյի 5010
7. 6 «Ա »Խաչատրյան Լուսինե Արմենի 5010
8. 6 «Ա »Ծառուկյան Վարդան Հայկի 5010
9. 6 «Բ »Գալստյան Աննա Բենիկի 5010
10. 7 «Ա »Խաչատրյան Մանուկ Միսակի 5830
11. 7 «Ա» Մաթևոսյան Անահիտ Զոհրաբի 6330
12. 7 «Ա» Մաթևոսյան Միլենա Համլետի 6330
13. 7 «Բ» Հովհաննիսյան Սյուզաննա Արտակի 6330

14. 8 «Ա» Թանանյան Արտաշես Օհանի 5650
15. 8 «Ա »Հովհաննիսյան Մայրանուշ Գևորգի 6430
16. 8 «Բ» Հայրապետյան Սարգիս Ավթանդիլի 5290
17. 8 «Բ» Մաթևոսյան Նարեկ Զոհրաբի 6430
18. 9 «Ա» Իսրայելյան Սուսաննա Սեթի 6510
19. 9 «Բ» Բաղալյան Արփինե Գուրգենի 6510
20. 9 «Բ» Հովհաննիսյան Ատոմ Գորիսի 6510
21. 9 «Բ» Ստեփանյան Կամո Դիմիտրի 6510
22. 9 «Բ» Օհանյան Էստելա Սերգեյի 6510
23. 10 «Ա» Խաչատրյան Սուսաննա Հայկի 7230
24. 10 «Ա» Հայրապետյան Արթուր Լեոնիկի 7230
25. 10« Բ» Գևորգյան Նվեր Գեղամի 7230
26. 10 «Բ» Մաթևոսյան Նվեր Զոհրաբի 7230
27. 10 «Բ» Ալեքսանյան Մերի Կամոյի 7230
28. 11 «Ա» Դավթյան Հասմիկ Սուրենի 7260
29. 11« Բ» Եղիազարյան Լիանա Մերուժանի 7260
30. 11 «Բ» Ղազարյան Մարիամ Թադևոսի 7260
31. 12 «Ա» Մարգարյան Համեստ Արթուրի 6480
32. 12 «Ա» Սարգսյան Գայանե Աշոտի 6480

Ընդամենը 190 300

2.Լսեցին.- 2018 թ. ատեստավորվող ուսուցիչների մասին դպրոցի ծնողական խորհրդի կողմից կարծիքներ տալու հարցը:

Ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Նաիրա Բաբայանը՝ տեղեկացնելով, որ 2018 թվականին շարունակվում է ուսուցիչների ատեստավորման գործընթացը: Համաձայն ՀՀ Կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշմամբ հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգի>> այս տարի ատեստավորվելու է 6 ուսուցիչ: Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ.-ի դեկտեմբերի 14-ի N1310-Ա/Ք հրամանով հաստատված փաստաթղթերի ցանկի՝ ատեստավորվող ուսուցիչների մասին ծնողական խորհուրդը պետք է կարծիքներ ներկայացնի՝ բնութագրելով նրանց մասնագիտական որակները և աշխատանքները աշակերտների և ծնողների հետ:

Տնօրենը նշեց, որ ատեստավորման ենթակա 6 ուսուցիչներն էլ պարտաճանաչ և խստապահանջ ուսուցիչներ են, նրանցից 4-ը ունի մանկավարժական երկարամյա փորձ և մեթոդական բարձր պատասխանատվություն, երիտասարդ ուսուցչուհիներ Ն. Քոչարյանը և Լ. Ազարյանը պրպտող ուսուցչուհիներ են, զբաղվում են ինքնակրթությամբ, մեթոդական նորությունները համարձակորեն զուգակցում են ավանդականին և ստանում ցանկալի արդյունք: Ատեստավորվող բոլոր ուսուցիչները մասնակցել են ԿԱԻ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին, դասաժամերին հմտորեն կիրառում են ժամանակակից մեթոդները, ունեն մասնագիտական լավ որակներ:

Ծնող Անի Բաղալյանը ատեստավորվող ուսուցիչներին որակեց՝ որպես բանիմաց, պատվախնդիր և աշխատասեր մանկավարժների, ովքեր աշակերտների և ծնողների հետ հարաբերությունների հիմքում դնում են պատասխանատվության բարձր զգացումը, ունեն մատչելի խոսք, որի միջոցով դասը կարողանում են դյուրըմբռնելի դարձնել, ունեն անհրաժեշտ մարդկային և մասնագիտական որակներ և մոտեցում:

Որոշեցին.- Հաշվի առնելով արտահայտած կարծիքները Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի ներքոնշյալ ուսուցիչների վերաբերյալ՝ ծնողական խորհրդի կողմից տալ բնութագրեր.

1. Մուրադյան Արևիկ Ռազմիկի
2. Սամսոնյան Թամարա Պայքարի
3. Ազատյան Լուսինե Աշոտի
4. Սարգսյան Հայաստան Համբարձումի
5. Քոչարյան Նելլի Քաջիկի
6. Վարդանյան Մարջիկ Վարդանի

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հրանուշ Ավագյան

Քարտուղար՝ Տաթևիկ Ազատյան